ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«13» օգոստոսի 2018 թ. N 178-Ա

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-րդ, 159-րդ, 164-րդ, 169-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Արթուր Հովհաննիսյանի դիմումը՝

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արթուր Հովհաննիսյանին տրամադրել 2018 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2018 թվականի օգոստոսի 15-ից սեպտեմբերի 11-ը ներառյալ:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունները 2018 թվականի օգոստոսի 15-ից սեպտեմբերի 11-ը ներառյալ դնել «Մարտունու ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության կանանց կոնսուլտացիայի բաժանմունքի վարիչ Աշոտ Հովհաննիսյանի վրա:

3. Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի սեպտեմբերի 12-ից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
Ք.Գավառ